ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/29

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

Բողոք բերող՝ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-55/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, 15Դ 100 դիզել գեներատորային կայանի պահեստամասերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 12.04.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-55/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 12.04.2021թ.-ին:

13.04.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/29 համարի ծածկագիրը:

22.04.2021թ.-ին և 30.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 22.04.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.04.2021թ.-ին:

1. **<u>«ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն 12.04.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցության հայտ է ներկայացրել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար 15 Դ 100 դիզել գեներատորային կայանի պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-55/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

«ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-իկողմից ներկայացված Հավելված 1-ում Ընթացակարգի ծածկագիրը նշված է ճիշտ, սակայն գնային առաջարկ Հավելված 2 գնանշման հարցման ընթացակարգի ծածկագիր նշված է սխալ, այն է՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21» (55 փոխարեն 26):

«ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի գնային առաջարկը կազմում է 3 960 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.04.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 5-րդ կետով գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի հայտը գնահատվեց անբավարար և մերժվեց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով և թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. մասնակցի գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված:

Ինչպես արդեն նշել ենք, «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1-ում Ընթացակարգի ծածկագիրը նշված է ճիշտ, սակայն գնային առաջարկ Հավելված 2 գնանշման հարցման ընթացակարգի ծածկագիր նշված է սխալ, այն է՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21» (55 փոխարեն 26):

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.04.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 5-րդ կետով գնահատող հանձնաժողովը որոշել է «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի հայտը գնահատվեց անբավարար և մերժվել՝ չնշելով մերժման հիմքը, սակայն մեր կարծիքով, հայտը մերժելու հիմք է հանդիսացել այն, որ գնային առաջարկում սխալ է նշված եղել հրավերի ծածկագիրը:

Գտնում ենք, որ այս պարագայում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իրավունք չուներ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի հայտը մերժելու՝ մեր կարծիքով «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում ընթացակարգի ծածկագիրը սխալ նշելու հիմքով:

Վերոհիշյալը հիմնավորվում է նաև այն փաստով, որ Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է մասնակցի ներկայացրած գնային առաջարկում հնարավոր անհամապատաս-խանությունների հնարավոր դեպքերը, որոնց պարագայում մասնակցի հայտը ենթակա չէ մերժման և հաշվի առնելով, որ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած Հավելված 2-ում առկա տեխնիկական վրիպակը կապված չէ բուն գնային առաջարկի՝ հաշվարկի հետ, ուստի գտնում ենք նման տեխնիկական վրիպակը հիմք չէր մասնակցի հայտը մերժելու համար:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ նման տեխնիկական վրիպակի հիմքով, որը անվավեր չի դարձնում ներկայացված գնային առաջարկը, մերժվել է ավելի էժան գին ներկայացրած «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի հայտը, ինչի արդյունքում պետությունը ստիպված է լինելու պայմանագիր կնքել հաջորդ տեղ զբաղեցնող և ավելի բարձր գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հետ /տարբերությունը 2.000.000 ՀՀ դրամ/:

Մասնավորապես գնային առաջարկում նշված ծածկագրում մեկ թվի ավելորդ լինելը հանգեցրել է նրան, որ պետությունը ստիպված է լինելու պայմանագիր կնքել մոտ 2 մլն. ավելի թանկ գնային առաջարկ ներկայացրած անձի հետ, ինչի արդյունքում խախտվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված գնումների տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքը:

Ցանկանում ենք հայտնել նաև, որ գրեթե նմանատիպ գործ քննվել է նաև գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում /ԳԲՔԱ-ՆԳ-2019/56 ծածկագրով բողոքը բավարարվել է/, որտեղ Ընկերության հայտը մերժել էր, քանի որ գնային առաջարկում «Տերմինալ Պլյուս» ՍՊԸ-ի փոխարեն նշվել է «Տերմիալ Պլյուս» ՍՊԸ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/56 ծածկագրով բողոքի վերաբերյալ 29.08.2019թ. կայացրած որոշմամբ՝ բողոքներ քննող անձն արձանագրել է, որ ուսումնասիրելով «Տերմինալ-Պլյոա» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը, արձանագրում եմ, որ Ընկերության կողմից ներկայացված ոչ միայն գնային առաջարկի, այլ նաև հայտով ներկայացված բոլոր փաստաթղթերի վրա առկա է Ընկերության ռուսերեն լեզվով կնիքը, որի վրա նշված է ՕՕՕ «Терминал-Плюс», իսկ մասնակցության հայտի թիվ 1 Հավելվածում նշված է նաև Ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը ….: Դրա հետ մեկտեղ, ամփոփելով վերը նշված փաստերը, գտնում եմ որ «Տերմինալ-Պլյոա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում մասնակցի անվան մեջ «ն» տառի բացակայությունը չի կարող դիտարկվել էական վրիպակ վերջինիս հայտը մերժելու համար:

Ձեր ուշադրությունն ենք դարձնում նաև մեկ այլ՝ նմանատիպ գործի, որը նույնպես քննվել է գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում /ԳԲՔԱ-ՆԳ-2019/66 ծածկագրով բողոքը բավարարվել է /.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/66 ծածկագրով բողոքի վերաբերյալ կայացրած որոշմամբ՝ բողոքներ քննող անձն արձանագրել է, որ Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով և թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին.

գ. մասնակցի գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված:

Այսպիսով՝ չնայած այն հանգամանքին, որ Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը և 41-րդ կետը սահմանում են, որ հրավերի պահանջներին անհամապատասխան ներկայացված գնային առաջարկն առանց շտկելու հնարավորության ենթակա է մերժման, այնուամենայնիվ, Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է այն բացառությունները, որոնց առկայության պայմաններում մասնակցի գնային առաջարկն ենթակա չէ մերժման:

Ուսումնասիրելով «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի գնային առաջարկը և դրանում տեղ գտած վրիպակը, ինչպես նաև հիմք ընդունելով գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման անհրաժեշտությունը, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը՝ գտնում եմ, որ չնայած այն հանգամանքին, որ Ընկերության գնային առաջարկում ընթացակարգի ծածկագրերից մեկը սխալ է նշվել, այնուամենայնիվ նշված վրիպակի էական չլինելու պատճառով Ընկերության գնային առաջարկը պետք է գնահատվի բավարար…:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-55/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

2. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 14.04.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/5584-2021 գրությամբ դիմել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի կողմից 12.04.2021թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել է հրավիրված նիստին:

Պատվիրատուն 16.04.2021թ.-ի թիվ Ե/40/945-21 գրությամբ, ներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնել է նաև հետևյալը.

«Համաձայն «Գնումների մասին» «ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի, «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի բողոքի քննության նպատակով Ձեր դիտարկմանն ենք ներկայացնում «Հայկական ատոմային էլեկտրակայան» Փակ Բաժնետիրական Ընկերության (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) գրավոր դիրքորոշումը և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար 15 Դ 100 դիզել գեներատորային կայանի պահեստամասերի ձեռք բերման նպատակով ս/թ մարտի 23-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-55/21» ծածկագրով գնման ընթացակարգը (այսուհետ՝ ընթացակարգ), որին մասնակցության հայտ են ներկայացրել «Էանիգերա» ՍՊԸ-ն, «Կարապետ Ստեփանյան» Ա/Ձ-ն, «Գրիման» ՍՊԸ-ն և «ԿԱ ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ն:

Տեղեկացնում եմ Ձեզ, որ բողոքաբերը մասնակցել է միայն գնման ընթացակարգի թիվ 2 չափաբաժնին:

«ԿԱ ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ի ներկայացված մասնակցության հայտի գնային առաջարկի հավելված 2-ում գնման ընթացակարգի ծածկագիրը նշված է եղել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21», որը չի համապատասխանում գնման ընթացակարգի ծածկագրին, այն է՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-55/21», որի վերաբերյալ նշված է եղել հանձնաժողովի ս/թ ապրիլի 5-ի թիվ 4 արձանագրության մեջ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակիցների կողմից ներկայացվող մասնակցության հայտերի հավելվածներից յուրաքանչյուրը հանդիսանում է միմյանցից անկախ փաստաթղթեր, հետևաբար գնային առաջարկի վրա առկա գնման ընթացակարգի ծածկագրից ելնելով հանձնաժողովը չի կարող հավաստել, որ բեռնված հավելված 2-ը պատկանում է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-55/21» գնման ընթացակարգին:

Մերժման համար հիմք են հանդիսացել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության հետևյալ դրույթները.

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում

հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են»: Ընթացակարգի հրավերով գնման ընթացակարգն է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-55/21», որը մասնակցի կողմից ներկայացված մասնակցության հայտի հավելված 2-ում նշված է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21»:

- ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի 32-րդ կետի 2-րդ կետով սահմանված են այն բոլոր բացառությունները որոնց դեպքում գնային առաջարկը ենթակա չէ մերժման: Բերված բացառությունների մեջ առկա չէ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-55/21» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «ԿԱ ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ի մասնակցության հայտի գնահատման ժամանակ հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը:

- ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն «հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը»:

Հաշվի առնելով ՀՀ «Գնումների մասին օրենքի» 2-րդ հոդվածի 1-ին կետը, հավաստիացնում ենք, որ գնումների գործընթացը կազմակերպվել է միասնական կանոններով մրցակցային և թափանցիկ հիմունքներով: Հետևաբար կարծում ենք, որ բողոքաբեր անձի բողոքը անհիմն է, քանի որ գնահատող հանձնաժողովը գործել է բացառապես «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ և այլ իրավական ակտերով սահմանված նորմերով՝ ապահովելով գնման գործընթացի մրցակցային, համաչափ և ոչ խտրական կազմակերպումը:»:

3. <u>ԳԲՔԱ-LO-2021/29 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից 15Դ 100 Դիզել գեներատորային կայանի պահեստամասերի ձեռքբերման նպատակով 23.03.2021թ.-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-55/21» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն:

iii. «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի կողմից թիվ 2 հավելվածով ներկայացված գնային առաջարկում որպես գնման ընթացակարգի ծածկագիր է նշվել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21»:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 05.04.2021թ.-ի ժամը 10:00-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ փաստաթղթերի գնահատման արդյունքում «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

v. Հանձնաժողովի 05.04.2021թ.-ի ժամը 16:25-ին կայացված նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը արձանագրել է, որ մասնակիցների մասնակցության հայտերի գնահատման ժամանակ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, այն է՝ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածում գնման ընթացակարգի ծածկագիրը սխալ է նշված եղել (ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-55/21-ի փոխարեն նշված է եղել ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21), որը հայտերի գնահատման ժամանակ չի արձանագրվել:

vi. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշել է Ընկերության հայտը մերժել:

vii. www.gnumner.am կայքում պայմանագիր կնքելու նպատակով 08.04.2021թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

viii. Նույն հայտարարության համաձայն՝ որպես հրավերի պահանջներին համապատասխանող հայտ ներկայացրած մասնակից նշվել է նաև «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն:

4. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «ԿԱ ընդ ԿՈ

Թրայդ» ՍՊԸ-ի կողմից 12.04.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախոսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275 փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև

հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով.

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից 15Դ 100 Դիզել գեներատորային կայանի պահեստամասերի ձեռքբերման նպատակով 23.03.2021թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-55/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 5.1-րդ կետի համաձայն՝ առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

Հրավրի 5.2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը

դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից 15Д 100 Դիզել գեներատորային կայանի պահեստամասերի ձեռքբերման նպատակով 23.03.2021թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-55/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի կողմից թիվ 2 հավելվածով ներկայացված գնային առաջարկում որպես գնման ընթացակարգի ծածկագիր է նշվել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21»: Սակայն Հանձնաժողովի 05.04.2021թ.-ի ժամը 10:00-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրության համաձայն փաստաթղթերի գնահատման արդյունքում «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից: Այնուհետև Հանձնաժողովը 05.04.2021թ.-ի ժամը 16:25-ին կայացված նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է, որ մասնակիցների մասնակցության հայտերի գնահատման ժամանակ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, այն է՝ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածում գնման ընթացակարգի ծածկագիրը սխալ է նշված եղել (ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-55/21-ի փոխարեն նշված է եղել ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21), որը հայտերի գնահատման ժամանակ չի արձանագրվել, ինչով պայմանավորված Ընկերության հայտը մերժվել է:

www.gnumner.am կայքում պայմանագիր կնքելու նպատակով 08.04.2021թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ, ինչպես նաև որպես հրավերի պահանջներին համապատասխանող հայտ ներկայացրած մասնակից նշվել է նաև «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն:

Ամբողջացնելով գործում առկա փաստերը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ թիվ 2 հավելվածում՝ գնային առաջարկում, Ընկերությունը որպես գնման ընթացակարգի ծածկագիր նշել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21»՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-55/21»-ի փոխարեն:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, դրանց համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ թիվ 2 հավելվածով սահմանված գնային առաջարկում «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-55/21»-ի փոխարեն նշված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21» /55-ի փոխարեն՝ 26/ հանդիսանում է վրիպակ /տպագրված գործի մեջ տեղ գտած սխալ (ուղղագրական, կետադրական և այլն)/ *(տե՛ս, Էդուարդ Բագրատի Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1976):*

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Հանձնաժողովը չպետք է գնային առաջարկի մասով մերժեր Ընկերության հայտը, ուստի Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և պետք է բավարարել՝ ապահովելով Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի կողմից 12.04.2021թ.-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/29 ծածկագրով ներկայացրած բողոքը բավարարել ամբողջությամբ:

2. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-55/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**